

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Երևանի գ

6851

Հայոց օրու



Երևանի գ
1921

Առևաստանի Ս. Փ. Խ Հանրապետութիւն

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԻ ԽՈՎՅԱՆ ԵՐԿՐՈՒԹԻՒՄՆԵՐԸ

ԱՐՁԵՐՈՒՆՔ

ՎԱՂԻԱՆ ՕՐԸ



891.99

Q-92

Հայակական թու Երիտ. Կ. Ա. Գլըմի Հրաչյանին
Կոմիտեի

Ամբողջական 1921 թ.

1015

Բ. Վ. Ա. 1000 զվ.

Սփիրոն, 7-ա հանձ. տիկ.

ԿՐՈԼԵՏԱՐԱՆԻ, ԲՈԼՈՐ ԵՐԿՐՄԵՐԻ ՄՏԱՑՔ-Ի

894.99
Ա-92-

ԱԿ.

ՎՐԱՅՐՈՒԹԻՒՆ

134

ՎԱՂԻԱՆ ՕՐԸ

119



Հրատարակութիւն Խ. Երիտ. Կ. Ս. Ղրիմի Շրջանային
Կոմիտեի

Սրմթերուցօ 1921 թ.

2003

1915

Ex urbe lux!

Prolog.

Տափակ մարդկութեան ուղեղը թմրած
Ճահիճանման Քտօսն էր ապրում.
Յոգնած ոյժերի կարաւանը մեծ
Քտօսի գրկում դէպ անդունդ իջնում . . .



5182

38

I

Ե, երկար դարեր, դարեր շարունակ
Նստել էր, բազմել Վիշապը Հիդրա—
Քօղարկւել մարդու կերպարանքի մէջ.
Նմանւել նրա ձեխն, բնութին:
Եւ մտրակ խփել օրէնքի ոյժով,
Եղբօր ձեռներով Փշըն է գանգեր,
Գետեր են հոսել կարմիր արիւնի
Քաղաքի, գիւղի քանորի կրծքից . . .
Մարդուկ—սարդերի վոհմակը նանիր
Հիդրայի հլու կամակատարներ—
Շինել են տաճար մարզուն խարելու,
Ստեղծել աստւած կոյր մոլորութեան,
Գրել օրէնքներ ուրիշի համար,
Արին գոյն տւել համամարդկային
Բարեկեցութեան, որ հլու պահեն
Բանոր, գիւղացուն իրենց ճանկերում . . .
Եւ այդպէս երկառ երկար տարիներ
Վիշապը Դեղին, աստւածը մարդու
Իշխան էր համայն մարդկութեան վրա
Երկար ու երկար տարի շարունակ . . .

II

Քաղաքների փողոցներում
 մրապարուր,
 Ածխահանգի նկուղներում
 խաւարանենդ,
 Նաւթահորի հեղուկի մէջ
 սառեցնող,
 Գործարանի շառաշի հետ
 աղմկայոյզ,
 Քուրաների բոցի կողքին
 արևատապ,
 Տպարանի փոշիներում
 արճճային,
 Մեքենայի դղրդոցի
 աղմուկի տակ,
 Մեծ սալերի զնոցոցի մէջ
 ահեղնադող,
 Եւ սուլիչի կանչերի հետ
 ըմբռստացման
 Եւ ժխորում քաղաքների
 հազարերախ

Կոփւեց հաստատ, կոփւեց վստահ
 Զըրկւածի ու բանւորի
 Այնքան կարող ու համարձակ
 Միտքը խիղախ, ըմբռստ Ոգին:
 Շատ տարիներ, դար շարունակ
 Նիւթն էր գրկել համայն աշխարհ,
 Սարկացրել մարդուն մենակ
 Եւ ամբոխներ հազար, հազար...
 Ազատ կամքի թոփչք, թեր
 Մարդը կտրեց իր նմանի,
 Որ մի գիշեր յանկարծակի
 Զըմբռստանա ու չզարթնի:
 Մեծ ձահիճի տափակ մարդկանց
 Զանքերն անցան իզուր, իզուր . . .
 Քաղաքն ելաւ ոտքի կանգնեց
 Ու խորտակեց կապանքն իր...
 Ըմբռստ Ոգին բանւորների
 Քաղաքների լաբիրինտում
 Զայնեց մարտի հրամաններ...
 Տըա-տա տտա-տա տրա տտա-տա . . .

III

Եւ ամբոխներն ելան ոտքի
 Հազար, հազար, հազարներ.
 Կործանելու եկան նրանք
 Ճահիճները մարդկութեան . . .
 Նեփորեցին պայքարի փող
 Բանտոր, զրկւած գիւղացին,
 Որ գան արագ ամբոխներ շատ
 Եւ տապալեն թշնամուն. . .
 Եկան, եկան ամբոխներ շատ
 Անթիւ, անթիւ, անհամար.
 Չինւած մրճով, խոփ ուկացնով,
 Մանգաղ, երկաթ, գերանդով. . .
 Եկան նրանք, ում հոգին գեռ
 Ճահիճը շէր խորտակել
 Մտան շարքեր ջահել, ջահել
 Հոգով, սրտով պրուետար. . .
 Եւ բանակներն ամբոխների
 Անցան քայլով հաստատուն
 Խորտակելու ճահիճը մեծ
 Նեխւած, տափակ մարդկութեան. . .

IV

Ժխոր է, պայքար...
 Ճահիճն է այրւում.
 Թնդում են ահեղ մարտի շեփոքներ,
 Զէնքերի շառաչ լուռում ամենուր,
 Արեներ վառում երկրի ծոցերից,
 Հազոցներ լուռում որոտից ուժեղ,
 Կայծակն երկնի գունատ է, անփայլ
 Եւ գեհեն վառել հսկայածաւալ.
 Որի մէջ այրւում ճահիճը նեխւած
 Հին մարդկութեան հետ համահաւասար'.
 Վիշապըն ընկել
 Տնքում է արդէն...
 Եւ խելացնոր ամբոխներն այսօր
 Իրար են բռնել ժխորում վերջին,
 Եւ օրհասական կռւի ընթացքում
 Կրծում են վայրի իրար կոկորդներ. . .
 Ցուսահատ ձչոց լաւում է ընդհատ,
 Եելառ քրքիչներ կախւել են օղում,
 Բոկ խելացնոր ամբոխները դեռ
 Ժանիք ատամով կոկորդ են կրծում. . .

Մշուշը դանդաղ

Թաօսն է լուծում:

Եւ բռոր երկրի, քանդած աշխարհի

Աւերակների, հողակոյտների

Մշուշների մէջ անգոյն տարերքից

Առաջ է գալիս մի հսկա տիտան . . .

Գալիս է առաջ —

Լաւ տեսէք նրան . . .

Բազուկներ ունի աննկուն պողպատ,

Աշքերի մէջ կան կրակներ այրող,

Զեռին նա ունի երկաթէ մեծ մուրճ,

Իսկ ինքը հսկա — Ներսու է այսօր . . .

Եւ կամքն է պողպատ — բազուկների պէս . . .

Նպատակն այրող — աշքերի նման . . .

Վճիռը հաստատ — ընկեր մրճի հետ,

Եւ Գործը նրա — իրեն պէս Հսկա.

Թնդանօթներ մեծ, վիթխարի

Իրար կողքի շարւեցին.

Նրանք այսօր ձայն են մաքրում

Վաղւան շրեղ հանդիսի . . .

Վաղն է գալիս հսկա, հսկա.

Թնդանօթներ՝ երգիչներ.

Կեանը է սկսում նոր մարդկութեան.

Թնդանօթներ շեփորէք . . .

Եւ երգն այսօր թնդանօթի

Ծով է անցնում, երկրներ,

Զայնը նրա քանդում աշխարհ,

Սարսափեցնում գահոյկներ . . .

Թնդանօթներ երգիչ — կախարդ,

Կաբոզվ շարւած իրար մօտ,

Երգ են ձայնում աշխարհաձայն —

Վաղւան գալիք յարութեսն . . .

Հին աշխարհին բերում էք դուք

Վախճան, աւեր, շարական.

Գալիք վաղւան հիմն էք ձայնում —

Գունեղ արփի, ծիածան. . .

VI

Մագում է նոր գալիք օրւա
 Արևարեր Արշալոյս.
 Եկէք գնանք դիմաւորենք
 Աշխատանքի հիմներով...
 Վառէք մոմեր նոր աստծուն—
 Խարոյի, բուրվառ և բոցեր.
 Դրէք բաղին - նոր հիմնաքար
 Վաղւան գալիք օրերի . . .
 Տես բանւորին, պատրաստ-պատրաստ
 Ատրուշաններ է վառել .
 Գործարանի ծխնելոյզներ՝
 Մոմեր գառել փրկութեան . . .
 Գործարանի քուրաներում
 Շիկանում են երկաթներ.
 Մինելոյզի որկորներից
 Ամպեր ժայթքում—հսկաներ . . .
 Մեծ դղրդին, իրարանցում
 Եւ շառաջներ կլսէք.
 Մի վախենաբ այդ նոր կեանքի
 Կարմիր Արփին է ծնւում...

Վաղն է գալիս մեծ հանդէսով
 Նոր կեանքի և փրկութեան,
 Հիմք է դրւում, հիմքեր հաստատ
 Գալիք մատաղ մարդկութեան. . .
 Այսօր արդէն քաղաքն ամբողջ
 Տենգոտ գործի է անցել,
 Աչք չէ փակել գիշերըն ողջ.
 Որ չստեղծւի պատահար . . .
 Բանւորն արդէն դուրս է հանել
 Գործարանի պահեստից
 Գնդակ ու ռումբ, թնդանօթներ,
 Նաւ, սաւառնակ ու վառօդ. . .
 Մեծ կոնցերդի ապրում ենք մենք
 Նախօրեակը եղակի,
 Վառ օրերի—Դարուն կեանքին
 Մօտենում ենք մենք արդէն. . .
 Մի խնայէք կրակ, ռումբ,
 Երկաթ, վառօդ, հրացան,
 Երգ սկսէք անօրինակ
 Դալիք մարդու յարութեան. . .

Զան, հա ջան!

Գալիս է, տեսէք . . .

Հեռու ճամբաներ եկել է նա ժան,
Կեանքի պայքարներ անցել է բոլոր,

Արիւնի դաշտեր — սփինքս վկաներ
իր ճանապարհին պատահել անթիւ . . .

Հարւած է տւել, սաացել հարւած,
Եւ ընկել թուլցած արեան լի մէջ,

Որքան բանւորներ կորդել է երէկ
Ու որքան ընկել մնացել անշունջ . . .

Գալիս է, գիտցէք,

Զրկւածներ բոլոր . . .

Ծնւել է ցածրիկ խրճիթի միջին,
Գործարաններում ամբացրել բազուկ,

Բանւորների հետ անիծել աշխարհ,
Եւ երկինք, աստւած, և տէր, և ծառա,

Տեսել է զրկանք երէկ և առաջ,
Կապւել նիւթի հետ ստրկի նման,

Երազել առաջ շքեղ արշալոյս,
Անրջել անվերջ, օրեր յաղթութեան . . .

Բայց հիմա արդէն
մօտ է նա այնքան . . .

Գալիս է, բայց ով:

Մի հսկա տիտան . . .

Գալիս է, գալիս յաղթական թափով
Անյազթ վիթխարի, սէդ օրը — Վաղւան,
Իրեն հետ տանում ամբոխներ հազար.

Ամրոխներ հազար իրեն սպասում . . .

Գործարանների սուլիչներն ուժգին

Զայներ են ձգել գեռ այսօրւանից

Վաղ արշալոյսի գունաւորման հետ

Երգելու համար հիմնը նոր կեանքի:

Բանակները մեծ անթիւ, անհամար

Զրկւած բանւորի, աղքատ գիւղացու

Գառնում են արդէն մարտի դաշտերից

Դիմաւորելու — սէդ օրը Վաղւան . . .

Սուրբ աշխատանքի հսկան է գալիս —

Աշխատանքն է սէդ այդ օրը վաղւան

Գալիս է, զարթնէք . . .

Գալիս է, ջան, ջան:

ԱՐԹՈՒՐԻՔ ԽՈԿՈՅՆ

Ու եղէք պատրաստ:

Թուղած ոյժերին տալիս է կորով.
Յոզնած ուղեղին գործելու ճամբար,
Արնեքամ մարմնին ապրելու տենչեր,
Յուսահատ մարդուն եռանդի պաշար,
Ներջնչում ոդի ընկածների մէջ,
Երազները խօև վերածում կեանքի,
Խոցերը թունոտ բուժում աննկատ,
Արթնացէք իսկոյն ու եղէք պատրաստ,
Այդ նա է գալիս.
Հսկան յաղթական...
Եկէք գէմ գնանք,
Զան նրա ճամբին . . .

Epilog.

Պատրաստ եղէք բոլըրդ ամեն,
Եկք նրան դէմ գնանք.
Գալիս է նա օրը—Վաղւան,
Գալիս թափով յաղթական . . .

Մայիս 1921 թ.
Բաթում





6851

Крымское Областное Отделение Государст. Издательства.

2018

